

**Տեղեկանք . Տրանսպորտային և ընդունելության վարկեր**

**Ռ՞վ է մարման վարկը**

Ակնկալվում է, որ վարկատերը լիարժեքորեն կմարի վարկը՝ ամսական մուծումներով, ըստ մարման ժամանակացույցի:

Մարմանը պետք է սկսի վարկատիրոջ Կանադա ժամանումից 30 օր անց: Ամսական մուծումները հաշվարկվում են ըստ մարման ժամանակացույցի՝ ելնելով փոխառնված գումարից: Վարկատերը կարիք չունի սպասելու մինչև իր մարման ժամանակացույցը հաստատող նամակը ստանալը; վարկի մարմանը խրախուսվում է սկսել անմիջապես տոկոսադրույքից ազատված ժամանակահատվածից առավելագույն օգտվելու և սեփական պարտքի բեռը երկարաժամկետ առումով թեթևացնելու նպատակով:

**Տրանսպորտային վարկ .**

Դիմորդին հնարավորություն է տալիս վճարել Կանադա իր ուղևորության վերջնական հանգրվան հասնելու նպատակով կատարվող տրանսպորտային ծախսը:

**Ընդունելության վարկ .**

Դիմորդին հնարավորություն է տալիս հոգալ իր բժշկական զննման ծախսերը:

**Հովանավոր խմբերը պատասխանատու չեն ներգաղթողի**

տրանսպորտային կամ ընդունելության որևէ վարկի մարման համար:

**Մարման ժամանակացույց**

Վարկի գումարը	Մարման ժամկետը
\$1,200-ին հավասար, սակայն ոչ ավելի մեծ գումարի վարկերի համար	Տրամադրումից հետո 12 ամսվա ընթացքում
\$1,200.01 - \$2,400	Տրամադրումից հետո 24 ամսվա ընթացքում
\$2,400.01 - \$3,600	Տրամադրումից հետո 36 ամսվա ընթացքում
\$3,600.01 - \$4,800	Տրամադրումից հետո 48 ամսվա ընթացքում

\$4,800-ից ավելի մեծ գումարի վարկերի համար	Տրամադրումից հետո 72 ամսվա ընթացքում
--	--------------------------------------

Մարման ժամկետի տևողությունը պայմանավորված է տրամադրված գումարի չափով: Ամսական մուծումները հաշվարկվում են ելնելով փոխառնված գումարի չափից:

Պետական օժանդակությունից օգտվող փախստականների (GAR), Joint Assistance Sponsorship-ի (JAS) և Մի րիակական Blended Visa Office-Referred (BVOR) ծրագրերի ներքո Գանադա ժամանող փախստականների համար տրանսպորտային վարկերը կարող են շրջանցվել:

Իրենց վարկերի մասին հավելյալ տեղեկատվություն կարիք ունեցող անձինք կարող են զանգահարել Գանադան ծառայություն անվճար, 1-800-667-7301 հեռախոսահամարով:

Վարկերի մարման մասին ընդհանուր տեղեկատվություն համար ինդրում ենք ծանոթանալ Արտերկրում գործերի վարույթի Ձեռնարկի (Overseas Processing Manual) Գլուխ 17-ին՝ Վարկեր, որը գտեղված է առցանց, <http://www.cic.gc.ca/english/resources/manuals/op/op17-eng.pdf> հասցեով:

**Տոկոսադրույքից ազատված ժամանակահատված**

Մասնավոր կարգով հովանավորված փախստականները տոկոսադրույքից ազատված շնորհաժամկետ ունեն, որի տևողությունը մեկից մինչև երեք տարի կարող է լինել, ըստ վարկի գումարի չափի: Տոկոսադրույքը սահմանվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվարին՝ ելնելով այն տոկոսադրույքից որը Գանադայի Կառավարությունը գանձում է Crown կորպորացիաներին տրված վարկերի համար: Տոկոսադրույքն ուժի մեջ է մտնում վարկի կյանքի ողջ ընթացքում:

**Refugee Sponsorship Training Program**

Հեռ. 416.290.1700, 1.877.290.1701

Ֆաքս՝ 416.290.1710

Էլ. փոստ՝ [info@rstp.ca](mailto:info@rstp.ca), կայք՝ [www.rstp.ca](http://www.rstp.ca)

Վերջին թարմացումը՝ 2017 թ. հունվարին